

ՊԱՏՄՎ-ԲԱՆԱԹԻՐԱԿԱՆ

ՆՎԻՐՎՈՒՄ ՄԱԾՏՈՅՑԱՆ ԳՐԵՐԻ ԳՅՈՒԺԻ 1600-ԱՄՅԱԿԻՆ

ԴԱԿՈԲ ՔՅՈՍԵՅՑԱՆ

Բանասիրական գիրությունների թեկնածու

ԴԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԽՈՐԴՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՍՏ ՉԵՌԱԳԻՐ ՄԻ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ

Ինչպես մատենագրական այլ տեսակները և ժամերը, բառարանագրականը նմանապես միշնադրում հետապնդում էր հոգևոր, ուսումնագործնական նպատակ՝ հետաքրքրություն խթանել աստվածաբանական գիտելիքի նպատմամբ, նպաստել դարի պահանջած գեղարվեստական ճաշակի հաստատմանը։ Այս գույզ նպատակներին հետամուս՝ հայ իրականության մեջ կյանքի են կոչվել տարբեր ուղղության և բովանդակության բառարաններ։ Դրանց մեջ ուրուց հետաքրքրություն են ներկայացնում բառադրձվածային բառարանները։ Սրանք ոչ թե թարգմանական բառարաններ են, այլ խոսքարվեստին «զյութականապես ծառայող... տարբեր բովանդակության և ծավալի» բառային և բառադրձվածային շտեմարաններ։

Բառադրձվածային այսօրինակ շտեմարաններից մեկի բնորոշ օրինակ է ՄՄ-ի թիվ 7117 (3ա-37ա), 6962 (2ա-33ա) ձեռագրերում «Դաւթի հայոց փիլիստիվայի և Փիլիկեայ հոռոմոց վարդապետի և Հոմորեայ արուեստաւորի և Մովսէսի Քերթողի» անունով առկա բառարանը։ Սա պատկանում է «Բառք գովասականք» կոչվող բառարանների տարատեսակին։ Սրանում առկա միավորներն ըստ էության աստվածաբանական, քերթողական, ճարտասանական բնույթի երկերից բաղված ոնքը ու դարձույթներ են։ Դրանցից մի քանիսը առկա են նաև այլաբնույթ բառարաններում։ Քանի որ այս բառարաններում առկա են ինչպես առանձին բառամիավորներ, այնպես էլ մատենագրության մեջ առավել հաճախությամբ կրկնվող ոճական կայուն դարձվածքներ, ուստի ավելի նպատականարմար է այն անվանել գովասանական բառերի ու ոճերի բառարան։ Մասնագիտական գրականության մեջ այս տիպի բառարանները հայտնի են «բանամատուց» անունով։ Դրանք հայ իրականության մեջ սկսել են հանդես գալ ԺԴ դարի Կեսերից։ Ի տարբերություն «բառամատուց» հորջորջված բառարանների (որոնք գերազանցապես մեկ միավորից կազմված շարքեր են), սրանք առավելապես բաղկացած են երկու, երեք և ավելի բառամիավորներից։ Ինչպես նկատում է Հ. Ամայանը, ներկայացվող բառարանը միշին դիրք է գրալեցնում բառամատուց և բանամատուց բառարանների միջև²։

¹ Դրանց մասին մաերամասն գլուն Շ. Մ. Ամայան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Եր., 1966, Խոյեի, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (XVI-XVII դդ.), Եր., 1971։

² Հ. Ամայան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Եր., 1966, 19

Ցոյքնագրեանքի հետ խնամություն անող այս բնագիրը հայոց գրերի խորհրդական բովանդակության թեկաղրանքով բաժանված է երկու ընդարձակ մասերի³: Առաջին մասն իր ներին բաժանված է երեք ենթամասերի կամ «պատճենների»: Առաջին ենթամասն արտացոլում է ՄԱՆԻՐ գիրը՝ Ա.-Թ տառերին վերագրված խորհրդական բովանդակության միջոցով: Երկրորդ ենթամասը դարձյալ բովանդակում է վեցօրեից, խորհրդական մեկնաբանություն այս պարագային արդեն Ա.-Ը տառերի շրջանակում: Երկրորդ ենթամասը ոչ այլ բան է, քան Ավետարանի, Քրիստոսի տնօրինության և վախճանաբանական ապանի ամիսի պատկերը, որ ուրվագծվում է Ա.-Գ տառերի համառոտ բացատրությամբ:

Գրության երկրորդ մասում, որ սկսվում է «Դարձուք անդրէն ի քերական Այրիս և սկիզբն արացուք այլ խորհրդոյ՝ Դաւթի փիլիսոփայի» հորդորով, այբբենական կարգով (Ա.-Բ) տրված են բառեր, արտահայտություններ, դարձվածքներ (շուրջ 1200 միավոր): Դրանք բովանդակ միջնադարում ճարտասանական խոսքի մեջ կիրառված մասնահատուկ կաղապարներ են, որոնք հանձնարարվում են օգտագործել ի պետս խոսքի զորության և գեղեցկության: Գերազանցապես ուսումնական նպատակ հետապնդող այս և նմանատիպ բառարաններն, ինչպես երևում է, կազմվել են «մի ինչ-որ դպրոցական-վարժական ձեռնարկի» հետևողությամբ և, տվյալ պարագային, վերագրվել Դավիթ Անհաղթի հեղինակությանը: Բառարանի նպատակն է ցուց տալ Հայոց Այրութենի աստվածային զորությունն ու խորհրդավոր հմայքը, որը փոխանցվում է այբուբենի յուրաքանչյուր տառով սկսվող բառերին և արտահայտություններին ու խոսքը դարձնում ենրագդու:

Ելմելով առկա միավորների բովանդակությունից՝ բառարանն ունի սուրբգրային, աստվածաբանական-դպավանաբանական, քերականական, քերթողական, գրչական շերտեր: Այրութենի խորհրդաբանության մեջ գերակշին տեղ են զբաղեցնում սուրբգրային զուգորդումները, ակնարկներն ու մեկնությունները: Առեն երկի նախադրության մեջ նշվում է, որ Հայոց Այրութենի 36 տառերն իրենցում խորհրդաբանուն պարունակում են Աստվածաշնչի պատմությունն իր զյախավոր դրվագներով: Այդ են Աերկայացնոս մասնավորաբար Ա.-Է տառերի բացատրությունները, որոնք վերաբերում են արարչագործությանը: Մեկնաբանական վերացարկում տեսակետից ուշագրավ է Ժ-ի միավորների շարքը, որը զուգահեռ է անցկացվող Մովսես Նախամարգարեի Տաճարանյա պատվիրանների, Բեսեղիելի ասեղնագործ խորանի նույն չափի, այնուեղ առկա տասը կաթսաների և Քրիստոսի մարմնի տասը անդամների միջև: Նվազ ուշագրավ չեն «Պատղոսի նման՝ պարծելոյն ի Խաչ», «Պետրոսի հանգոյն՝ պատուական վիմին» միավորները, որոնք աստվածաբանական խտացումներն են այդ առաջլաներին վերաբերող սուրբգրային համարնությունների: «Այլ ինձ քա լիցի պարծել, բայց միայն ի Խաչն Տեառն մերոյ Ցիտուի Քրիստոսի» (Գաղատ. Զ 14), «Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, եւ ի վերայ այդ վիմի շինուցից զեկեղեցի իմ»

53, 140, 141:

³ Ներկա թևագիրը իրը «Եթենագրնանք» բավականին համակողմանիրեն ներկայացված և վերլուծված է: Խելքեայ աշխաբության մեջ. Պ. Մ. Պողոսյան, «Եթենագրնանք»-ի առնդգվածը և Դավիթ Ամեադր-«Դավիթ Անհաղթ. Ո-Ը» (հողվածների ժողովածու), Եր., 1980, լ. 143-210:

4 Հ. Ամայան, Խշվ. աշխ., լ. 140:

(Մոլո. ԺԶ 18):

Բառարանի աստվածաբանական-դավանաբանական շերտում առավել բնորոշ են հետևյալ տեղիները. «Այս այս զէութիւն բնութեան Երրորդութեան զանհաս տարածանէ...»; «Բնեն ումի զբունումն Բանից բարբառական ի Հայէ անսպառապէս...»:

Քրիստոնարանական ակներև հետաքրքրություն է ներկայացնում «Փոխարկաբար ոչ էառ մարմին: Փոխատրաբար էառ մարմին Տէրն» արտաթալտությունը: Այն կիրառված է Ս. Բարսեղ Կեսարացու Ս. Մամյան տոնին նվիրված ճառում, որ կարդում ենք. «Եւ զի՞նչ արինակ ի մարմնում աստուածութիւնն, որպէս հուր յերկալում ոչ փոխարկաբար»⁵: Այս տեղիի որոշակի ազդեցությունն է Աշմարվում Ս. Գրիգոր Նարեկացու Աղոթքամատյանի (ԿԳ) «Մարդեղութեան Քո... անփոփոխ փոխատրութեամբ», Տիրամոր Անրորոյի «Ոչ փոփոխամամբ, այլ փոխատրութեամբ», ինչպես նաև՝ Գրիգոր Դ Տղա Կաթողիկոսի (Կթղ.՝ 1173-1193թ.) թղթերից մեջի «Որպէս երկաթ ընդ հրոյ միաբանեալ ընդունի զնուրն ոչ փոխարկաբար, այլ փոխատրաբար» արտահայտություններում⁶: Գիմ-ով դրսորվում է Ս. Հոգու գործակցությունը Հորը և Որդուն: Ը-ն մեկնաբանվում է արեռապահիտյան աստվածաբանության ոգով: Նա խորհրդապատկերն է Քերովքնեների, որոնք իրենց 8 թևերով «սքաւեալ թեսապարհն զաստուածային Աթոռովն պարփակեալ պարփակին ասրածն աւղովն», այս.ու այն կողմ են թևածում, բայց չեն հեռանում Աթոռից, և այդքան մոտիկ լինելով անեղ Աստվածության փառքին՝ չեն հանդգնում նայել Նրան:

Քերականական շերտում ուշագրավ են հետևյալ տեղիները. «Երեք կետ են ի հոլովսն, եւ այսպէս բաժանեն. զվերնակէտ, զմիջակէտ եւ զատորակէտ»: Ը-ն «ումի յինքն բազում խասս իմաստական»՝ առ ի պարզել զատկութիւն լեզուի եւ բայի»: Բոլոր ժամանակները հարաբերվում-կապակցվում են իրար է-ի միջոցով և բնավորվելով սերտաճում բոլոր իրենին, ընդհանուր գոյացություններին Ը-ի շնորհիվ («Ընդ» շաղկապով): Ինչպես դժվար չէ տեսնել, հեղինակի նպատակը ոչ թե ընթերցողին կաղապարելն է քերականական իրողությունների անձուկ շրջանակի մեջ, այլ իմաստափրական վերացարկումով աստվածաբանական ընդհանրացման առաջնորդելը:

Քերթողական շերտի մեջ բնութագրական են «զեառն վիմածին», «Փեսայացեալ Բացին» արտահայտությունները, որոնք նկատի ունեն Աստվածածնին: Առաջին դարձվածքը աստվածաբանական, գեղարվեստական վերաբօրումն է Դամիել մարգարեի տեսիլիք համապատասխան դրվագի (Բ 34, 45): Երկու արտահայտություններն եւ Աերկա են Ծարականցում⁷:

Գրչական շերտում մատնացուց է արվում տառերի արտաքին հանգամանքը, գումը: Այստեղ արտահայտված է «արթեստ, որ ումի զամենալի հնարս գրչութեան» և «տրամագիծ տառից»: Եթե ա-ն իր գծապատկերով դրսուրիչն է Սուրբ Երրորդության խորհրդի, ապա «Բնեն զՈրդոյ գալուստն նշանակէ՝ զգլուխն ի խոնարի ունելով...»: Միանգամայն

⁵ Տես «Երանելոյն Բարսի և այսկոպոսի Կապաղովկացոյ ասացեալ ի Ծնունդ Քրիստոսի», աշխար. Դ. Պ. Տիր-Պողոսյանի, «Հանդէս ամսօրեայ», 1968, լ. 421-422, լ. 44-46:

⁶ Հ. Ռ. Բ, լ. 949:

⁷ Տես «Ճարական, հոգնոր երգոց սուրբ և ուղղափառ և կեղեցոյն Հայաստաննայց...», Վաղարշապատ, 1861, լ. 62, 40:

ակնհայտ է բառարանագիր հեղինակի միտումը՝ տարի գծապատկերային առանձնահատկությամբ արտահայտել Երրորդաբանական և Քրիստոսաբանական հրամանակարգ տեսությունը: Երրորդաբանական գաղափարն է ընկած նաև տառերի գումային երեք վիճակների՝ սկի, կարմիրի և կանաչի մեկնաբանության հիմքում: Գումարից յուրաքանչյուրը դրսկորում են Հոր, Որդու և Ս. Հոգու հատկությունները: Սկզ ցուց է տալիս Հոր անհասանելի լինելը, կարմիրը՝ Որդու զոհաբերության խորհուրդը, իսկ կանաչը՝ առաջալների՝ Ս. Հոգով լցվելը. առաջալների, ովքեր ցողալի ամայի նման հոսեցին դեռ երկիր՝ այն «վայելչացուցանելով կանաչացեալ բուսով»⁸:

Հրապարակվող բնագիրը հարուստ է բառային այնպիսի միավորներով, որոնք բացակայում են «Նոր բառցիրը հայկազեան լեզով» բառարանում: Այդպիսիք են. անդամայոյզ, անեղաբատատ, ասրածե, անանգինական, անեղահրաշ, անեղատունկ, անզրուակ, անհրակեզ, առաշանդ, ասպարապէտ, բարիահրաշ, բեղմնաւէտ, գծագոչ, եւթավտակեան, զարդարափայլ, թագադիրապէտ, թռանեալ, ժամադասեալը, իմասհաշէն, խորլսրախիտ, կառածե, կուտակակոխ, կէտադիրն, հրածոյլը, հրաշազարման, հրաշողը, ձախադասն, ջրյարկ, ճգնախնդիր, ճշմարտաքեր, յարաբարձրութիւնք, յոգնահետ, նորատիպ շինակից, շողասոյզ, շողափայլ, շողախաղ, սիրակետութիւն, սրաշատի, սրաշանգ, քառասոր, քրովքեաթոիչ, քրովքեափակ, աւդաթեւահներձիկ, աւդասիրաշարժ:

Բնագիրը հրատարակվում է ըստ ՄՄ հետևյալ ձեռագրերի:

Ա=ձեռ. 7117, ժողովածու: Ժամանակ՝ 1440 թ.: Վայր՝ Մեծոփիա՞յ վանք: Գրիչ՝ Հովհաննես Արծիշեցի, Թովմա Մեծոփիեցի: Ստացող՝ Թովմա Մեծոփիեցի, Մկրտիչ քնն. (Հովհաննես գրչի հայրը): Թերթ՝ 347: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 12,1 x 8,5: Գրություն՝ միայնուն, երկայնուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 18-23: Բնագիրը՝ թ. 3ա-37ա:

Բ=ձեռ. 1267, ժողովածու: Ժամանակ՝ ԺԵ դ.: Գրիչ՝ Գեորգ երեց, Պետրոս: Ստացող՝ Գեորգ վարդապետ: Թերթ՝ 363: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 27,5 x 19: Գրություն՝ երկայնուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 39: Բնագիրը՝ 328ա-336բ:

Ծ=ձեռ. 6962, Գիրը Մանուշակի (ժողովածու): Ժամանակ՝ 1686 թ.: Գրիչ՝ Հոհան դահիր: Թերթ՝ 84: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 15 x 10,5: Գրություն՝ միայնուն: Գիր՝ նոտրօգիր: Տող՝ 16: Բնագիրը՝ թ. 2ա-33ա⁹:

⁸ Գոյների այսօրինակ մնկնաբանությունը հարաբերվում է միջնադարում կննցադավարող «զունային» ասրբածարանությանը: Այս մասին մաքրամասն գլուխ Ռ. Քյոսկյան, Լոյսի և զոյնի ասրբածարանությունը հայ միջնադարում, «Գանձապար» Ասրբածարանական հանդես, Ը (հրատ. ընթացքում):

⁹ Նկարագրությունն ըստ՝ Ցուցակ ճուղարաց Մաշտոցի անվան Մագնեսադարանի, Դր. Ա. Բ. կազմցին Օ. Եղակյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Եր., 1965, լ. 513-514, 1970, լ. 430, 464-465: